

Գեղամ Ասատրյան

ԲՈՒՒՆԱՐԵՍՏԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ¹

Քանայի բառեր. Ռումինիա, Բուխարեստ, հայ համայնք, Ռումինահայոց միություն, դաշտային հետազոտություն, սփյուռք, ինքնություն:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտության գլխավոր նպատակը արդի փուլում Բուխարեստի հայ համայնքում տիրող իրավիճակի լուսաբանումն է: Այդ նպատակով խնդիր է դրվել տեղում իրականացնել համայնքային կյանքի դիտարկում, ինչպես նաև համայնքի և Ռումինիայի հայերի միության ներկայացուցիչների հետ հարցազրույցների անցկացում և հարդյունս համադրական վերլուծություն²: Ներկա ուսումնասիրության մեջ հիմնականում կանդրադառնանք.

1. Բուխարեստի հայ համայնքին և նրա թվաքանակին,
2. Ռումինիայի հայոց միությանը,
3. Ուժացման հիմնահարցին և հայոց լեզվի խնդրին,
4. Ռումինահայ դպրոցին,
5. Ռումինահայ մամուլին,
6. Ռումինահայ եկեղեցուն,
7. Ռումինահայ մշակույթին,
8. Միջհամայնքային կապերին:

Պատմական ակնարկ

Հայերը Ռումինիայում հաստատվել են դեռևս 10-րդ դարում, թեև հայ համայնքների մասին գրավոր հիշատակություններ հանդիպում են միայն դրանից շուրջ հինգ դար անց: Ռումինական երկու միջնադարյան իշխանություններում՝ Մոլդովայում և Վալախիայում, որոնք 1859 թ. միավորվեցին և ձևավորեցին Ռումինիա պետությունը, ժամանակին հաստատվել են հայերի ստվար հատվածներ: Հայերի մեկ այլ հատված լայն ինքնավարություն ուներ ռումինական երրորդ իշխանությունում՝ Տրանսիլվանիայում³, մասնավորապես՝ իրենց կառուցած Արմենոպոլիս (ներկայումս՝ Գեռլա) և Եղիսաբեթոպոլիս (ներկայումս՝ Դումբրովեն) քաղաքներում⁴: Տրանսիլվանիայի իշխանությունները երկրի անմարդաբնակ տարածքները բնակեցնելու նպատակով խրախուսում էին հայերի ներգաղթը Տրանսիլվանիա, ուր հայերի հոսքը եղել է պարբերական, սակայն հիմնական ներգաղթը վերաբերում է 1672 թվականին, երբ հիմնականում Մոլդովայի իշխանությունների կողմից հալածանքների հետևանքով Տրանսիլվանիա հեռացավ շուրջ 3000 հայ ընտանիք⁵: Մոլդովայի հայ համայնքի քաղաքականապես ակտիվ հատվածը հիմնականում բնակվել է Սուչավա, Յաշ և Բոտոշան քաղաքներում: Վերջինիս հայ բնակչությունը 1526 թ. ստացել է համայնքային ինքնավարություն՝ ձեռք բերելով հայ բնակչության համար առանձին ղեկավար և քաղաքային խորհրդում մոլդովացիների հետ հավասարաչափ ներկայացուցչություն ունենալու իրավունքներ⁶: Իրավիճակը

¹ Հոդվածում ներկայացված են 2018 թ. հունիսին ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի կողմից Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության հայկական համայնքների բաժնի դրամաշնորհով Բուխարեստում իրականացված դաշտային հետազոտության արդյունքները:

² Հարցազրույցներն իրականացվել են 2018 թ. հունիսին Բուխարեստ քաղաքում: Հետազոտության բոլոր նյութերը գտնվում են հեղինակի անձնական արխիվում: Հարցաթերթիկների օրինակը կկցվի ստորև:

³ Տրանսիլվանիան Ռումինիայի կազմի մեջ մտավ 1918 թ.:

⁴ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինիայի հայ համայնքների քաղաքական գործունեությունը (15-21-րդ դդ.), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2014, թիվ 2-3, էջ 211:

⁵ Տե՛ս Արզումանյան Ա., Տրանսիլվանիայի հայ համայնքը և նրա մասնակցությունը քաղաքների կառուցմանը և զարգացմանը (17-20-րդ դդ.), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2014, թիվ 1, էջ 144-145:

⁶ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինիայի հայ համայնքների քաղաքական գործունեությունը (15-21-րդ դդ.), էջ 213:

զգալիորեն փոխվեց 1915 թ. հայոց ցեղասպանությունից և 1920 թ. Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո: Առաջին դեպքում դեպի Ռումինիա տեղի ունեցավ տասնյակ հազարավոր գաղթականների մեծ հոսք, երկրորդ դեպքում Ռումինիայում հաստատվեցին նաև Հայաստանի Ա հանրապետության (1918-20 թթ.) մի շարք ղեկավար այրեր (Դրաստամատ Կանայանը 1925 թվականից, Միսակ Թռչալքյանը)¹:

1. Բուխարեստի հայ համայնքն ու նրա թվաքանակը: Ներկայումս Ռումինիայում և հատկապես Բուխարեստում հայերի թվաքանակի մասին տեղեկություններ ստանում ենք առաջին հերթին վերջին տարիներին Ռումինիայում անցկացված մարդահամարների արդյունքներից և համայնքային գործիչների տրամադրած որոշ տվյալներից: Ռումինիայում 1989 թ. տեղի ունեցած հեղափոխությունից հետո անցկացվել է 3 մարդահամար՝ 1992, 2002 և 2011 թվականներին: Ըստ այդ մարդահամարների՝ հայերի ընդհանուր թվաքանակը Ռումինիայում նշված թվականներին եղել է հետևյալը².

Մարդահամար/թվական	Ռումինիա	Բուխարեստ
1992	1957	909
2002	1780	821
2011	1361	627

Ինչպես տեսնում ենք, ըստ անցկացված մարդահամարների տվյալների՝ Ռումինիայում հայերի թվաքանակը կարծես ունի կայուն նվազման միտում: Դա բացատրվում է նրանով, որ վերջին տարիներին մեծ թվով ռումինահայեր արտագաղթել են Արևմտյան Եվրոպա և ԱՄՆ: Նշված թվաքանակի նվազման միտումները չեն փոխվել անգամ այն պարագայում, երբ բնիկ ռումինահայերի շարքերը համալրվել են նաև Հայաստանի Երրորդ Հանրապետությունից 1990-ականներից սկիզբ առած արտագաղթի հետևանքով մեկնած հայերով: Նշվում է, որ ժամանակին, երբ Ռումինիայում դեռևս կոմունիստական կարգեր էին հաստատված, մի պահ ռումինահայերի թվաքանակը գիջել է անգամ ԱՄՆ տեղափոխված ռումինահայերի քանակին³:

Նշված թվերը, սակայն, չնայած մարդահամարի տվյալներին՝ խիստ վիճարկելի են: Վերջին տարիներին Ռումինիայում բնակվող և գործունեություն ծավալող, թեմայի վերաբերյալ մի շարք ուսումնասիրությունների հեղինակ Արսեն Արզումանյանը նշում է, որ իրականում բավականին բարդ է որոշել հայերի թվաքանակը Ռումինիայում: Ըստ նրա՝ բավականին դժվար է որոշել հայ լինելու չափանիշը և նախ պետք է հասկանալ՝ ով է իրեն համարում հայ: Ա. Արզումանյանը նշում է, որ տարբեր հաշվարկներով հայկական արմատներ ունեցողների թիվը հասնում է մոտ 10.000-ի. շատերի մի կողմի պայքար կամ տատը հայ է, բայց նրանց մի մասն է միայն իրեն համարում հայ, մասնակցում համայնքային միջոցառումներին⁴: Բուխարեստում հայերի մի մասն այդուամենայնիվ մասնակցում է ՌՀՄ-ի կողմից կազմակերպվող մեծ միջոցառումներին: Համայնքում մեծամասնություն են կազմում բնիկ ռումինահայերը, թեև վերջին երկուսուկես տասնամյակում Հայաստանից տեղափոխվածների մեծ մասը ապրում է հենց Բուխարեստում (մինչև 200 մարդ): Մի քանի ընտանիք էլ բնակվում է Կոնստանցայում, Տըրգու Մուրեշում և այլուր⁵:

Մարդահամարների տվյալների խիստ վիճարկելի լինելու մասին է խոսում նաև բավականին հետաքրքրական մի փաստ: 2000-ականների սկզբին Ռումինիայում ընտրելու իրավունք է ունեցել շուրջ 1000 հայ: Սակայն 2000 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ՌՀՄ-ն ստացել է մոտ 22.000 քվե⁶: Դժվար է հավատալ, որ

¹ Տե՛ս Թռչալքյան Մ., Օրերուս հետ, Լոս Անձելըս, 1953:

² Տվյալները վերցվել են Ռումինիայի ազգային վիճակագրության ինստիտուտի կայքէջից (անգլերեն): Տե՛ս www.insse.ro, (մուտք՝ 17.10.2018):

³ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, Ե., 2014, (թիվ 3), էջ 58:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 59:

⁵ Հարցազրույց ՌՀՄ նախագահ Վարուժան Ոսկանյանի հետ:

⁶ Աշխարհի հայերը-Վարուժան Ոսկանյան / <https://www.youtube.com/watch?v=SUszTHNXZBA>, 9:28-10:13, (մուտք՝ 18.10.2018):

ավելի քան 20.000 այլազգիներ իրենց քվեն տվել են ՌՀՄ-ին: Գրեթե նույն պատկերն է եղել նաև դրան հաջորդած երեք ընտրությունների ժամանակ, և խոսքը այս անգամ արդեն շուրջ 10.000 «հավելյալ» ձայների մասին է¹: Կարծում ենք՝ վերոնշյալ թվերը քանիցս ապացուցում են այն միտքը, որ խիստ վիճարկելի է հայերի քանակի այս կամ այն նշումը, քանի որ հայ լինելու չափանիշն էլ, բացի պարզ անհատական ընտրությունից («հայ եմ» կամ «հայ չեմ»), միանշանակ չէ, քանի որ, ինչպես տեսանք, հազարավոր մարդիկ, որ մարդահամարների ժամանակ իրենց հայ չեն համարում և գուցե մասնակցություն չեն ունենում համայնքային կյանքին, ընտրությունների ժամանակ, փաստորեն, քվեն տալիս են ՌՀՄ-ին: Գրեթե նույն տվյալներն են փոխանցում նաև համայնքային գործիչները: ՌՀՄ նախագահ Վարուժան Ոսկանյանը կարծում է, որ տասնյակ հազարավոր այլազգիներ իրենց քվեն տալիս են ՌՀՄ-ին, քանի որ վերջինս, չնայած ժամանակ առ ժամանակ իշխող կոալիցիայի մաս կազմելուն, ո՛չ աջակողմյան է, ո՛չ ձախակողմյան և զբաղվում է բացառապես մարդու իրավունքների պաշտպանությամբ: Նա նշում է, որ ՌՀՄ-ն համագործակցում է միայն ծրագրային ընդհանրություններ ունեցող քաղաքական ուժերի հետ, և ամենևին պատահական չէ, որ 2009 և 2013 թվականներին, խզվել է կոալիցիոն հուշագիրը, քանի որ ՌՀՄ-ն կողմ է քվեարկել ընդդիմադիրների ծրագրերին, թեև եղել է կոալիցիայի մաս²:

2. Ռումինիայի հայոց միություն (ՌՀՄ): Ռումինիայում հայերին միավորող կազմակերպությունը ՌՀՄ-ն է: Այն ստեղծվել է 1919 թ. Ռումինիայի ներքին գործերի նախարարության 1919 թ. հունվարի 25-ի հրամանով³: Երկրորդ աշխարհամարտի տարիներին այն փակվել է և վերաբացվել միայն 1989 թ. հեղափոխությունից հետո: ՌՀՄ-ն մշտապես ակտիվորեն մասնակցել է Ռումինիայի ներքաղաքական կյանքին և ունեցել ներկայացուցիչ-պատգամավոր այդ երկրի երկպալատ խորհրդարանի պատգամավորական պալատում: Համայնքը ներկայումս ևս ունի ներկայացուցիչներ՝ ի դեմս ՌՀՄ նախագահ Վարուժան Ոսկանյանի և փոխնախագահ Վարուժան Փամբուկչյանի: ՌՀՄ նախագահի հետ զրույցները և հարցազրույցներն էլ ամբողջացրել են ներկա ուսումնասիրության նյութը: Վ. Ոսկանյանը ժամանակին Ռումինիայում զբաղեցրել է սկզբում էկոնոմիկայի և առևտրի, 2006-2008 թթ. էկոնոմիկայի և ֆինանսների, իսկ 2012-2013 թթ. էկոնոմիկայի նախարարի պաշտոնները: Վ. Փամբուկչյանը 2000-2008 թթ. նախագահել է Պատգամավորական պալատի ՏՏ ոլորտի իր իսկ ստեղծած հանձնաժողովում⁴:

Բուխարեստում ևս հայերի կյանքը համակարգում է ՌՀՄ-ն, որը մայրաքաղաքից դուրս ունի ևս 14 մասնաճյուղ: Մայրաքաղաքում գործում է միության կենտրոնական գրասենյակը, որի շրջանակներում էլ իր գործունեությունն է ծավալում ՌՀՄ Բուխարեստի մասնաճյուղը⁵: Դրանք ունեն իրենց նախագահները և տարեկան գումար են ստանում միության ընդհանուր բյուջեից՝ ըստ իրենց ներայացրած ծրագրերի: Որոշ մասնաճյուղերում ընդամենը մի քանի հայ կա, բայց նրանք կարողանում են մեծ միջոցառումներ կազմակերպել, որոնց ներկա են լինում Ռումինիայի տարբեր պաշտոնյաներ⁶: Հետաքրքրական է, որ նշված մասնաճյուղերի քաղաքներից միայն Կոնստանցան է, որ ունի 100-ից ավելի հայ բնակիչ, մյուսների թիվն անհամեմատ փոքր է⁷:

ՌՀՄ-ն և մասնաճյուղերը հիմնականում գործունեություն ծավալում են մշակութային ոլորտներում՝ կազմակերպելով տարատեսակ միջոցառումներ և տպագրելով գրքեր: Այդ միջոցառումներից ամենակարևորը Բուխարեստում անցկացվող ամենամյա

¹ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո, էջ 59:

² Աշխարհի հայերը-Վարուժան Ոսկանյան / <https://www.youtube.com/watch?v=SUzTHNXZBA>, 10:28-11:45, (մուտք՝ 28.10.2018):

³ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինահայոց միության գործունեությունը (1919-2015 թթ.), ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, 1.5 (15), էջ 73:

⁴ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինիայի հայ համայնքների քաղաքական գործունեությունը (15-21-րդ դդ.), էջ 217-218:

⁵ ՌՀՄ-ի մասին առավել մանրամասն տե՛ս միության պաշտոնական կայքէջում՝ <http://www.uniuneaarmenilor.ro/contact/>, (մուտք 03. 11. 2018):

⁶ Հարցազրույց Վ. Ոսկանյանի հետ:

⁷ Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո, էջ 62:

«Հայկական փողոց» (Ստրադա Արմենասկը) եռօրյա փառատոնն է, որի ընթացքում լայնորեն լուսաբանվում է հայկական, ինչպես նաև Ռումինիայի մի քանի այլ փոքրամասնությունների մշակույթը: Փառատոնի երեք օրերի ընթացքում հազարավոր ռումինացիներ և այլազգիներ հնարավորություն են ունենում ծանոթանալու հայկական երգին ու պարին, ձեռագործ աշխատանքներին, գրականությանը, որի նմուշների ռումիններն թարգմանությունը իրականացվում է ՌՀՄ «Արարատ» հրատարակչության կողմից: Նրանք այցելում են հայկական եկեղեցի, գրադարան և թանգարան, որոնք իրենց բացառիկ արժեքով յուրահատուկ տեղ ունեն Բուխարեստի զբոսաշրջության ոլորտում: Խոսելով նույն փառատոնի մասին՝ ՌՀՄ «Արարատ» հրատարակչության տնօրեն Սիրուն Թերզյանը նշում է, որ ողջ փողոցի երկայնքով՝ շուրջ 100 մետր, դրված են լինում հայկական գրքեր: Ամեն տարի մարդիկ շուրջ 300-500 անուն գիրք ցերեկային ժամերին փողոցից վերցնում են բացարձակ անվճար հիմունքներով¹: Նմանատիպ միջոցառումներ կազմակերպվում են նաև այլ քաղաքներում, որտեղ կան ՌՀՄ մասնաճյուղեր: Օրինակ՝ 2017 թ. սեպտեմբերի 1-3-ը Բակլու քաղաքում՝ մարզպետարանի դիմաց, կազմակերպվել է հայկական փառատոն, ինչն իր ծավալով մեծ հնչեղություն է ունեցել քաղաքում²:

Բուխարեստում գրական-գիտական կյանքի հիմնական կարգավորողը ՌՀՄ «Արարատ» հրատարակչությունն է: Այն գործունեություն ծավալում է 1985 թվականից ՌՀՄ շրջանակներում: Հրատարակչական աշխատանքը սկսել է Ռումինիայում ճանաչված հայ գրող Ստեֆան Հակոբյանը: Տպագրված և տպագրության նախատեսվող հիմնական գրքերը հայերի և Հայաստանի հետ կապ ունեցող աշխատանքներ են, թեև պետք է նշել, որ կան այլ աշխատանքներ ևս: Առաջին հրատարակություններից է եղել Նիցշեի աշխատանքներից մեկը, ընդ որում լույս է տեսել 5000 օրինակով: Վերջին տարիներին հրատարակչության գործունեության խոսուն վկաներից է Վարդան Մարթայանի կազմած բառարանը: Աշխատանքի ռումիններեն-հայերեն բաժնում ներառված է շուրջ 30.000 բառ, իսկ հայերեն-ռումիններեն բաժինը ընդգրկում է շուրջ 70.000 բառ: Բառարանը հրատարակչության ամենակարևոր աշխատանք է, որի ծավալներին և ընդգրկումներինը հասնող աշխատանք չկա եվրոպական մեկ այլ հայ համայնքում³:

Յուրաքանչյուր տարի հրատարակչությունը լույս է ընծայում 10-12 գիրք: 2018 թ. նախատեսվել է հրատարակել մոտ 25 անուն գիրք, որի կեսն արդեն լույս է տեսել⁴: Հրատարակված աշխատանքները աչքի են ընկնում բազմազանությամբ: Լույս են տեսնում ինչպես մի շարք գեղարվեստական աշխատանքներ և պատմավեպեր՝ թարգմանված ռումիններեն (օր.՝ Վ. Ջարյանի «Նավը լեռան վրա», Ռաֆֆու «Խենթը» և այլն), այնպես էլ բազմաթիվ գիտական աշխատանքներ: 2017 թ. Ռումինիայում տեղի է ունեցել գիտաժողով՝ նվիրված գրականագետ, հասարակական գործիչ, հայագետ Հակոբ Սիրունուն: Տարբեր երկրներից Ռումինիա ժամանած բազմաթիվ հայագետների զեկուցումները և դասախոսությունների տեքստերը լույս են տեսել առանձին հրատարակությամբ: «Արարատ» հրատարակչությունը լույս է ընծայել ԱՄՆ-ում բնակվող 90-ամյա Մանուկ Գրգյանի՝ Դրաստամատ Կանայանին նվիրված մենագրությունը: Գրողը ժամանակին ճանաչել է Դրոյին: Բավականին հետաքրքրական է «Սասնա ծռեր» քառահատորը, որն ամբողջությամբ նկարագարո է նախատեսված երեխաների համար: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գրաբարյան տարբերակը վերոհիշյալ Վ. Մարթայանը թարգմանել է ռումիններեն: Նախատեսվում է աշխատանքը վերածել նաև հին ռումիններենի: Սիաժամանակ 2018 թ. ծրագրերի մեջ է մտնում ռումինահայ դիվանագետ, առևտական գործիչ Մանուկ Բեյի, Բոտոշանի հայերի պատմության և մի քանի այլ կարևորագույն աշխատությունների լույս ընծայումը⁵:

¹ Հարցազրույց ՌՀՄ «Արարատ» հրատարակչության տնօրեն Սիրուն Թերզյանի հետ:

² Հարցազրույց Վ. Ոսկանյանի հետ:

³ Հարցազրույց Ս. Թերզյանի հետ:

⁴ Լույս տեսած գրքերի քանակի մասին տվյալները վերաբերում են 2018 թ. հունիսին:

⁵ Հարցազրույց Ս. Թերզյանի հետ:

3. Ուժացման հիմնահարցը և լեզվի խնդիրը: Չնայած ՌՀՄ-ի այն գործունեությանը, որը կազմակերպել է հայ գրականության բազմաթիվ պատմավեպերի և այլ աշխատությունների թարգմանությունն ու հրատարակությունը (դրա նպատակներից է ռումինախոս հայերի ազգային ինքնության պահպանումը)՝ այդպիսով փորձելով հայ երեխաներին ավելի մոտ պահել հայոց լեզվին և գրականությանը, այդուամենայնիվ կարծում ենք՝ ուժացման վտանգը մեծ է Ռումինիայում: Դա պայմանավորված է մի կողմից կրոնական սակավ տարբերությունների հանգամանքով (հայերը չեն ձուլվել կամ մասամբ են ձուլվել հիմնականում իսլամական երկրներում), մյուս կողմից՝ հայոց լեզվին տիրապետողների թվաքանակի աստիճանական նվազումով:

Ռումինահայերի քանակական տվյալներն ըստ մայրենի լեզվի ընտրության¹.

Թվական/մարդահամար	Ռումինահայերի քանակական տվյալներն ըստ մայրենի լեզվի նշումի				
	հայերեն	ռումիներեն	հունգարերեն	այլ	հայերենը մայրենի համարողների տոկոսը
1992	878	973	82	24	45 %
2002	694	976	52	58	39 %
2011	705	578	57	21	52 %

Ակհայտ է՝ ռումինահայերի մայրենի լեզվի ընտրությունը հոգուտ ռումիներենի առաջին երկու մարդահամարների տվյալներով ունի աճի միտում: Ըստ պաշտոնական տվյալների՝ միայն վերջին՝ 2011 թ. մարդահամարի ժամանակ է գրանցվել դրական արդյունք՝ հոգուտ հայերենի: Չնայած այդ փոքրիկ դրական արդյունքին՝ հետազոտող Ա. Արզումանյանը նշում է, որ իր անձնական ուսումնասիրությունների արդյունքներով համոզվել է, որ հայերենը մայրենի լեզու համարողների թիվը ոչ միայն մի քանի հարյուր չէ, այլև տատանվում է 100-150-ի սահմաններում: Այդ թիվն էլ հիմնականում վերաբերում է 1980-90-ականներից հետո Հայաստանից և այլ երկրներից Ռումինիա տեղափոխվածներին: Իսկ վիճակագրական տվյալների ավելի մեծ լինելը ըստ Արզումանյանի այն պատճառով է, որ հայերենը մայրենի համարած 705 հոգին այն հայերն են, որոնք, չտիրապետելով լեզվին, այդուամենայնիվ իրենց լիովին հայ են համարում՝ ներգրավված լինելով ՌՀՄ միջոցառումներին, պահպանելով ազգային ավանդույթները և այլն²:

Խոսելով ուժացման վտանգը մեղմելու մասին՝ Վ. Ոսկանյանը նշում է, որ միակ միջոցը հայրենիքի հետ կապերի ամրապնդումն է: Այդ համատեքստում հարկ է առանձնացնել այն փաստը, որ ՀՀ սփյուռքի նախարարության մի շարք ծրագրերին մասնակցել ցանկացողների ճանապարհածախսը հոգում է ՌՀՄ-ն առանց խտրականության: Ռումինիայում այդ ուղղությամբ կազմակերպվում են տարբեր մշակութային միջոցառումներ և գործում է կիրակնօրյա դպրոց³: Պետք է նշել, որ մեր Ռումինիայում գտնվելու ընթացքում տեղի հայերի կողմից նկատվում էր բավականին մեծ հետաքրքրվածություն ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի նկատմամբ: Կար նաև մեծ անհանգստություն առ այն, որ իրենք 2018 թ. չէին կարող մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող ամենամյա «Արի տուն» ծրագրին, քանի որ Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո որոշվել էր այլևս չիրականացնել այդ նախագիծը: Հայապահպանության հարցում ռումինահայերի մի մասը հույսը կապում էր հայրենիքում կազմակերպվող ծրագրերի հետ:

Որքանով են այդ միջոցառումներին ներգրավված համայնքի ներկայացուցիչները և ինչպե՞ս է հավասարակշռվում լեզվի բավականին խնդրահարույց հարցը: Համայնքի

¹ Տվյալները վերցվել են Ռումինիայի ազգային վիճակագրության ինստիտուտի կայքէջից (անգլերեն): Տե՛ս www.insse.ro, (մուտք՝ 20.10.2018):

² Հարցազրույց հետազոտող Արսեն Արզումանյանի հետ: Տե՛ս նաև Արզումանյան Ա., Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո, էջ 60-61:

³ Հարցազրույց Վ. Ոսկանյանի հետ:

ներկայացուցիչ Էլիզա Դանիելյանը նշում է, որ իր շրջապատի շատ հայեր, եթե անգամ նկատելի մասնակցություն չեն ունենում համայնքային կյանքում, գոնե մասնակցում են կիրակնօրյա պատարագներին: Ինչպես Է. Դանիելյանի, այնպես էլ համայնքային մյուս ներկայացուցիչների և տարբեր գործիչների համոզմամբ ուժացումը կանխելու կարևորագույն միջոցներից է հնարավորինս շատ ռումինահայերի մասնակցությունը համայնքային միջոցառումներին (պատարագներ, ազգային տոներ և այլն): Է. Դանիելյանը նաև ՌՀՄ կանանց միության անդամ է: Վերջինիս ընտանիքը ամեն տարի փորձում է գոնե նվազագույն օգնություն ուղարկել Արցախին: Թեև ինքը ծնվել է Ռումինիայում և պապերը Ռումինիա տեղափոխվել են դեռևս 1923 թ., այդուհանդերձ նշում է, որ իր երկու աղջիկներին էլ տարել է հայկական կիրակնօրյա դպրոց, և ներկայումս երկուսն էլ գիտեն հայերեն գրել-կարդալ: Միաժամանակ Է. Դանիելյանը ցավով նշում է, որ ռումինահայերը վատ գիտեն հայերեն, և հավասարակշռությունը պահպանվում է միայն Հայաստանից եկած հայերի և վերջիններիս հետ շփումների հաշվին¹:

4. Ռումինահայ դպրոցը: Ինչպես տեսանք, Ռումինիայում, ինչպես եվրոպական մյուս հայ համայնքներում, բավականին խնդրահարույց է լեզվի հարցը: Այդ առումով ավելի է կարևորվում դպրոցի դերն ու նշանակությունը: Ռումինիայում կոմունիստական ռեժիմի օրոք փակվել են վերջին հայկական դպրոցները և մայրենին հնարավոր է եղել պահպանել միայն ընտանիքի և միջհամայնքային շփումների միջոցով: 1970-ական թթ. վերջերին Վ. Ոսկանյանը նախաձեռնել և անցկացրել է հայոց լեզվի ոչ պաշտոնական դասընթացներ երիտասարդության հետ²: Ներկայումս Բուխարեստում գործում է կիրակնօրյա դպրոց, ուր հաճախում է շուրջ 15 երեխա: Դպրոցում դասապրոցեսը հիմնականում անցկացվում է Հայաստանից ուղարկված դասագրքերով: Ցավոք, կարծում ենք՝ Հայրենիք-Սփյուռք կապերի համատեքստում միայն դասագրքեր ուղարկելը Սփյուռքի հայ համայնքներին բավականին քիչ է, նամանավանդ թե ՀՀ-ն իր առջև խնդիր է դրել լրջագույնս զբաղվելու հայ համայնքներում լեզվի խնդրով:

5. Ռումինահայ մամուլը: ՌՀՄ-ն ունի երկու պարբերական՝ «Արարատ» և «Նոր կյանք»: Առաջինի գլխավոր խմբագիրը Միհայ Կազազյանն է: Վերջինս խմբագրությունում է մոտ 30 տարի: «Արարատ»-ը առաջին անգամ լույս է տեսել 1924 թ. և գործել մինչև 1942 թ.: Կրկին տպվել է՝ սկսած 1990 թվականից: Սա հայերենին չտիրապետող ռումինահայերի համար է: «Արարատ»-ը սկզբում լույս է տեսել ամիսը երկու անգամ: Ներկայումս տպագրվում է ամիսը մեկ անգամ: Պարբերականի տպաքանակը մոտ 1000 է: Այն տեղադրված է նաև օնլայն հարթակում, և օրական այցելուների թիվը 2000-3000 է: Այս հարթակում տեղադրված տեղեկատվությունը բնականաբար մի քանի անգամ գերազանցում է թղթայինին³: «Նոր կյանք»-ը առանց դադարի լույս է տեսնում 1950 թվականից: Հրատարակման հաճախականությունը ժամանակին եղել է ամիսը մեկ անգամ, իսկ ներկայումս լույս է տեսնում երկու ամիսը մեկ անգամ: Այն 32-36 էջանոց գունավոր ամսագիր է: Սրա տպաքանակը մոտ 600 է: «Նոր կյանք»-ը լույս է տեսնում հիմնականում արևմտահայերենով, թեև երբեմն-երբեմն ունենում է նաև արևելահայերեն հատվածներ: Թերթերը հովանավորվում են պետության կողմից և դրա համար չեն վաճառվում և տարածվում են անվճար: Փոստային ծախսերը հոգալու նպատակով գանձվում է միայն բաժանորդագրման համար չնչին գումար: Լեզուն բավականին խնդրահարույց է, քանի որ գրելով դասական ուղղագրությամբ՝ հաճախ սխալներն ավելի են լինում: «Դրա համար անհրաժեշտ է ունենալ նորմալ դպրոց», - նշում է «Արարատ» պարբերականի գլխավոր խմբագիր Միհայ Կազազյանը⁴: «Արարատ» և «Նոր կյանք» պարբերականներով փորձ է արվում համայնքային կյանքը ներկայացնել տեղի հայերին և ռումինացիներին: Դա նաև մի յուրահատուկ քայլ է՝ ուղղված այլ համայնքների հետ կապեր հաստատելուն:

¹ Հարցազրույց Ռումինիայի հայ համայնքի ներկայացուցիչ Էլիզա Դանիելյանի հետ:

² Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո, էջ 60:

³ Հարցազրույց «Արարատ» պարբերականի գլխավոր խմբագիր Միհայ Կազազյանի հետ

⁴ Հարցազրույց Մ. Կազազյանի հետ:

6. Ռումինահայ եկեղեցին: Ռումինահայոց հոգևոր-մշակութային կենտրոնը Բուխարեստն է: Այդտեղ են գտնվում ինչպես ՌՀՄ-ն, թեմի և համայնքի արխիվը, Դուոյան մշակույթի տունը, այնպես էլ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին: Եկեղեցու շինարարությունը սկսել է 1911 թվականին ճարտարապետ Գրիգոր Չերքեզի նախագծով և ավարտվել 1914-ին: Օծումը կատարվել է 1915 թվականին: Հետաքրքրական է, որ եկեղեցու շինարարական աշխատանքները սկսելուց առաջ Բուխարեստից ճարտարապետներ են եղել Էջմիածնում՝ ուսումնասիրելու Մայր Տաճարը, որի նմանությամբ էլ հետագայում կառուցվել է Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին¹: Վերջինս գտնվում է Բուխարեստի Հայկական փողոցում (Strada Armenasca): Եկեղեցին իր շրջակայքով հիշեցնում է Հայաստանը: Այդ են վկայում ինչպես Մայր Տաճարի հետ արտաքին հորինվածքային նմանությունները, այնպես էլ միևնույն տարածքում ՌՀՄ-ի և Դուոյան մշակույթի տան գտնվելը: Մուտքի հատվածում տեղադրված է Ջորավար Անդրանիկի կիսանդրին: Տարվա ընթացքում նվազագույնը մեկ օր եկեղեցում հավաքվում է ռումինահայերի զգալի մասը: Այդ օրը հիմնականում լինում է եկեղեցու ուխտի՝ Գաբրիել և Միքայել հրեշտակապետերի հիշատակության օրը: Հայերին եկեղեցում կարելի է նաև տեսնել կիրակնօրյա պատարագների ժամանակ:

7. Ռումինահայ մշակույթը: Ռումինիայի հայ համայնքն աչքի է ընկնում հարուստ մշակութային ժառանգությամբ: Ժամանակին հեռանալով հայրենիքից՝ հայերն իրենց հետ Ռումինիա են տարել բազմաթիվ գրքեր և արվեստի մի շարք հոյակերտ նմուշներ՝ նկարազարդ ձեռագրեր, եկեղեցական հանդերձանքի նմուշներ, սրբապատկերներ և այլն: Այդ առումով անչափ կարևոր է Բուխարեստի Սրբոց Հրեշտակապետաց հայկական եկեղեցուն կից գործող Դուոյան մշակույթի տունը, որը ռումինահայ համայնքի կարևոր ձեռքբերումներից մեկն է: Այն հիմնադրվել է 1927 թ. իբրև Հայկական կենտրոնական գրադարան, իսկ շուրջ երկու տասնամյակ անց վերածվել է Հայ մշակույթի տան՝ կոչվելով նվիրատուներ Հովսեփ և Վիկտորյա Դուոյանների անունով²: Ներկայումս մշակույթի տանը թանգարանում պահվում են բազմաթիվ եկեղեցական-ծիսական և աշխարհիկ իրեր, որոնք հիմնականում պատկանել են Ռումինիայի մշանավոր հայ ընտանիքներին: Դրանցից ամենավաղ նմուշները վերաբերում են XVIII դարին՝ սեղանի խաչ և սկիհներ: Մասնագետները, դատելով գեղարվեստական և ոճական առանձնահատկություններից, եզրակացնում են, որ դրանք պատրաստվել են Կ. Պոլսում և գեղարվեստական արժեքից զատ ունեն նաև կարևոր պատմական արժեք, քանի որ հարուստ են նվիրատվական արձանագրություններով: Դրանց աշխարհագրությունը բավականին լայն է, և հավաքածուն ներառում է հայկական, եվրոպական և ռուսական տարբեր դպրոցների նմուշներ (Վան, Սեբաստիա, Կ. Պոլիս, Մոսկվա, Թիֆլիս, Լվով, Վիեննա): Թեև կան Ռումինիայում ստեղծված նմուշներ էլ, սակայն Կ. Պոլսից է բերվել եկեղեցական հագուստի և գործվածքի նմուշների զգալի մասը³:

Սրբապատկերները հիմնականում վերաբերում են XVII-XX դդ.: Դրանց մեծ մասը պատկանում է Մոլդովայի և Վալախիայի դպրոցներին, իսկ մեկը կրում է Տրանսիլվանիայի դպրոցի առանձնահատկությունները: Այդ սրբապատկերներից շատերը ստեղծվել են ռումինահայ վարպետների կողմից, որոնք, աշխատելով տեղի գեղարվեստական միջավայրում, հավատարիմ են մնացել վերջինիս տեխնիկային և ոճին⁴: Այդ ստեղծագործություններից չորսը նման են Էջմիածնում պահվող օրինակներին: Ի դեպ, ժամանակին Վազգեն Ա-ի կողմից բազմաթիվ ձեռագրեր տեղափոխվել են Էջմիածին: Վազգեն Ա-ն Էջմիածին է տեղափոխել նաև մի սրբապատկեր Սուչավայից, որն այժմ դրված է ցուցադրության: Այն գեղարվեստական և ոճական լուրջ աղերսներ ունի այժմ Հայ մշակույթի տանը պահվող մի սրբապատկերի հետ⁵: Հավաքածուի մեջ ընդհանուր

¹ Հարցազրույց Ա. Արզումանյանի հետ:

² Տե՛ս Արզումանյան Ա., Ռումինահայոց միության գործունեությունը (1919-2015 թթ.), էջ 74:

³ Տե՛ս Սմբատյան Ն., Վարդանյան Ս., Հայ արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրությունը Ռումինիայում, «Հայագիտության հարցեր», Ե., 2014, N 2, էջ 243:

⁴ Նույն տեղում, էջ 243-244:

⁵ Հարցազրույց Բուխարեստի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու սարկավագ Հայկ Այվազյանի հետ:

առնամբ գերակշռում են հայկական թեմաներով աշխատանքները: Պահոցում գտնվում են մի քանի տասնյակ աշխատանքներ, որոնք չեն դրվում ցուցադրության մի կողմից չվերականգնված լինելու, մյուս կողմից՝ ներկայումս շենքի անբարեկարգ լինելու պատճառներով: Այժմ բացի Բուխարեստի Սրբոց Հրեշտակապետաց հայկական եկեղեցուն կից Դուռյան մշակույթի տնից հայկական սրբապատկերների խոշոր հավաքածուներ պահպանվում են Բոթոշանում, Սուչավայում և Ռումինահայոց թեմի առաջնորդարանում: Վերջինում պահպանվում են նաև Ռոմանի հայկական եկեղեցուց տեղափոխված աշխատանքները¹:

Եկեղեցու սարկավագ, նկարիչ-վերականգնող, երկար տարիներ Ռումինիայի հայկական թեմի թեմական խորհրդի անդամ Հայկ Այվազյանը նշում է, որ հիմնական ծրագրերը արվում են եկեղեցու օժանդակությամբ, թեև որոշ ծրագրեր նախատեսվում են իրականացնել նաև ՌՀՄ-ի հետ: Ըստ նրա՝ վերականգնման աշխատանքները հիմնականում վերաբերում են գրքերին և արծաթյա իրերին²: Հարկ է նշել, որ Բուխարեստից դուրս՝ Սուչավայում գտնվող Հաճկատարի վանքում են կատարվել հիմնական նորոգման աշխատանքները: Ռումինահայ բարերարներ Հակոբ և Իկա Գույումջյանները հանձն են առել տեղի վանքի պատերի և հիմքի ամրացման, ինչպես նաև պեղումներ իրականացնելու աշխատանքները: Դրա արդյունքում գտնվել են փաստեր՝ ապացուցելու, որ հիմքը 1512 թ. է, ինչը թեև նախկինում առաջ քաշված, սակայն առանց փաստարկների տեսակետ էր: Այդ աշխատանքներին օժանդակել է նաև թեմը իր հնարավորությունների սահմաններում³: Ի դեպ, Սուչավայում Հաճկատարից բացի հայերը հիմնել են նաև Ջամկայի վանքը, Սբ. Խաչ, Սբ. Սիմեոն, Սբ. Աստվածածին և Սբ. Նիկողայոս եկեղեցիները⁴: Սրանք բոլորն էլ մեծ դեր են ունեցել Ռումինահայ գաղութի կայացման գործում:

Համայնքում այժմ մշակութային կյանքի կազմակերպմամբ զբաղվում է ՌՀՄ «Վարդավառ» պարի խումբը: Վերջինիս գեղարվեստական ղեկավարը Բելլա Մարտիկյանն է, որը Բուխարեստում շուրջ 15 տարի զբաղվում է այդ գործով: «Առաջին խումբս բաղկացած է եղել 10 աղջիկներից, և թիվը ժամանակի ընթացքում աճել է՝ հասնելով 46-ի: Սկզբնապես աշխատում էինք հայկական տարբեր ժանրերով, այդ թվում՝ ժողովրդական: Ընթացքում ավելացրինք նաև ազգագրական պարերը: 5-6 տարի առաջ մասնակցեցինք «Իմ Հայաստան» փառատոնին, որի ժամանակ էլ եղավ առաջին արտասահմանյան բեմելը: Այդ ընթացքում ծանոթացա ազգային մշակույթի նվիրյալ Գագիկ Գինոսյանի հետ, և դրանից հետո մեր ժանրերում գերակշռող դարձավ հենց ազգագրականը», - խոսելով խմբի ստեղծման և կայացման ընթացքի մասին՝ նշում է Բ. Մարտիկյանը⁵: Վերջին տարիներին խումբը մասնակցել է տարբեր փառատոնների, որոնցից Մարտիկյանն առանձնացնում է հատկապես հույների հետ մասնակցած երկու ժողովուրդների ազգային մշակույթին նվիրվածները: Ցավոք, խումբը ոչ թե ազգագրական երգ ու պարի է, այլ միայն պարի: Այս պահին խումբը բաղկացած է 10 հոգուց⁶:

8. Միջհամայնքային կապեր: ՌՀՄ-ն փորձում է զարկ տալ նաև միջհամայնքային կապերին՝ ժամանակ առ ժամանակ հանդիպումներ կազմակերպելով եվրոպական տարբեր երկրների հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Սակայն ցավով պետք է արձանագրել, որ հիմնական կապերը միայն հարևան երկրների հետ են. «Հիմնականում Բուլղարիայի հայ համայնքից են մասնակցում են մեր միջոցառումներին, մենք՝ իրենց կազմակերպածներին: Նաև Հունգարիայի հայ համայնքից են մասնակցում Տրան-

¹ Մանուկյան Ս., Սրբապատկերը Ռումինահայոց մեջ: Տե՛ս ակադեմիկոս Լ. Հախնազարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութեր, Ե., 2015, էջ 34:

² Հարցազրույց Հայկ սարկավագ Այվազյանի հետ:

³ Նույն տեղում:

⁴ Տ. Տաթև վարդապետ Հակոբյան, Սուչավայի Ս. Հաճկատարի վանքը:

Տե՛ս <http://www.matenadaran.am/ftp/data/Banber20/7.Vrd.Hakobyan.pdf>, էջ 95, (մուտք՝ 22.10.2018):

⁵ Հարցազրույց «Վարդավառ» խմբի գեղարվեստական ղեկավար Բելլա Մարտիկյանի հետ:

⁶ Նույն տեղում:

սիլվանիայի շրջանում կազմակերպվող որոշ միջոցառումների»¹: Դրանց կազմակերպման հիմնական պատասխանատուները տվյալ երկրների հայ համայնքներն են, որոնք փորձում են ամուր կապեր հաստատել միմյանց հետ:

9. Ընդհանուր դիտարկումներ և եզրակացություններ: Ներկայումս ՌՀՄ-ն նշում է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր տոները, միաժամանակ ինքնուրույն կազմակերպում այլ միջոցառումներ և մասնակցում եկեղեցական տոներին: Ամեն տարի ապրիլի 24-ին Բուխարեստում կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված գոհվածների հիշատակին: Կարծում ենք՝ հայերի՝ Ռումինիայում առավել բարեկեցիկ դրության մեջ որոշակի դերակատարում անշուշտ ունի նաև այն հանգամանքը, որ ՌՀՄ նախագահ Վ. Ոսկանյանը ՌՀՄ-ն ղեկավարելու հետ մեկտեղ զբաղվում է նաև ակտիվ քաղաքականությամբ: Նա նշում է, որ փոքրամասնություններին վերաբերող տարբեր հարցեր լուծվել են հենց իր գործունեության շնորհիվ: Խոսքը մասնավորապես վերաբերում է օրենքով ամրագրված այն կետին, որ ազգային փոքրամասնությունները տարեկան բավարար գումար են ստանում պետական բյուջեից գործունեություն ծավալելու համար: Վ. Ոսկանյանը ֆինանսների նախարար եղած ժամանակ կարողացել է նաև որոշակի գումար հատկացնել հայկական մի քանի եկեղեցու հիմնովին վերանորոգման համար: Չնայած դրան՝ Վ. Ոսկանյանը նշում է, որ այդուամենայնիվ իր՝ ՌՀՄ նախագահ լինելու հանգամանքը փորձում է հեռու պահել ներքաղաքական կյանքից հասկանալի դարձնելու համար, որ ներքաղաքական կյանքում ինքը ներկայացնում է միայն իր կուսակցությունը, իսկ ՌՀՄ-ն, ինչպես մյուս ազգային փոքրամասնությունները, խորհրդարանում ներկայացված է ի դեմս ազգային փոքրամասնությունների պատգամավորական խմբի ղեկավար Վ. Փամբուկչյանի²: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ռումինիան այն երկրներից է, որտեղ հայերը, իրենց երկարամյա գործունեության արդյունքում ձեռք բերած վստահության հետ, միաժամանակ ունեն նաև որոշակի առավելություններ՝ պայմանավորված համայնքի տարբեր ներկայացուցիչների՝ խորհրդարանում մշտական ներկայացվածության և տարիների ընթացքում նախարարական տարբեր պորտֆելներ զբաղեցնելու գործունեությամբ: Կարծում ենք՝ սրանք այն գործունեներից են, որոնք պետք է թիրախավորի ՀՀ-ն և օգտագործի Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համատեքստում Ռումինիայի հայ համայնքի առջև ծառայած խնդիրները լուծելու նպատակով:

Փորձենք համադրել մի քանի այլ փաստ ևս՝ հասկանալու համար հատկապես բավականին վիճահարույց հարցի՝ հայերենը մայրենի համարողների թվաքանակի իրական պատկերը: Մի կողմից առկա է վիճակագրական տվյալ, որ վերջին մարդահամարի տվյալներով մայրենին հայերենը համարել է 705 հոգի, մյուս կողմից առկա է հետազոտողի տվյալ, որ այդ թիվը իրականում 100-150 է: Բնական հարց է առաջանում, եթե հայախոսների իրական թվաքանակը, ինչպես նշում է Ա. Արզումանյանը, 100-150 է, այդ դեպքում ինչու՞ է այդ մարդկանց համար լույս տեսնող պարբերականի տպաքանակը 600: Այս թիվն ավելի մոտ է մարդահամարի տվյալին: Ռումինիայում մեր անցկացրած հետազոտության ընթացքում համադրելով այս թվերը՝ հարցն ուղղեցինք ՌՀՄ-ի ղեկավար կազմի տարբեր ներկայացուցիչների: Սակայն պատասխանատուները հիմնականում փաստեցին, որ լույս տեսնող 600 տպաքանակից շուրջ 400-ը ուղարկվում են տարբեր երկրներ³: Ինչպես նշեցինք, կոմունիստական կարգերի վերջին տարիներին բազմաթիվ ռումինահայեր հեռացել են այդ երկրից: Հետևաբար, ներկայումս համայնքային ներկայացուցիչները այլ երկրներ տեղափոխված ռումինահայերին համայնքի ներքին կյանքին ծանոթացնելու նպատակով տպաքանակի զգալի մասը՝ 400-ը, ուղարկում են այդ երկրներ, մասնավորապես՝ ԱՄՆ, Ֆրանսիա և Արգենտինա: Տպաքանակի մի որոշ հատված էլ ուղարկվում է Հայաստան⁴: Ինչպես վկայում են հաշվարկները, արևմտահայերենով լույս տեսնող «Նոր կյանք»-ի միայն 200 օրինակ է մնում

¹ Հարցազրույց Վ. Ոսկանյանի հետ:

² Հարցազրույց Վ. Ոսկանյանի հետ:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Ռումինիայում: Ակնհայտ է, որ այդ քանակն ունի հստակ հասցեատեր, և ստացվում է, որ հասցեատերը պետք է լինի հենց 100-200 հայ, ոչ ավելին: Հաշվի առնելով այս փաստը մի կողմից, մյուս կողմից՝ ոչ հայախոս զանգվածի համար մյուս պարբերականի շուրջ 1000 օրինակով լույս ընծայումը՝ կարելի է հստակ արձանագրել, որ հայախոս հատվածի իրական թիվը բավականին տարբեր է մարդահամարի տվյալներից և տատանվում է 100-200-ի միջև: Այդ թվերի հանրագումարը մոտենում է 2011 թ. մարդահամարի տվյալներով հայերի իրական թվաքանակին՝ 1000-ից մի փոքր ավելին:

Ինչպես նշեցինք աշխատանքում, երբեմն լեզվի բացը որոշակիորեն լրացվում է 90-ականներին ՀՀ-ից Ռումինիա տեղափոխված հայերի հետ շփումների արդյունքում: Սակայն հարկ ենք համարում անդրադառնալ մեկ կարևորագույն հարցի: Որքան էլ բնիկ ռումինահայերի և ՀՀ-ից տեղափոխված հայերի որոշակի շփումների արդյունքում փոքր-ինչ կարգավորվի լեզվի հարցը, այդուհանդերձ այն հեռավորությունը (թեկուզ փոքր-ինչ), որ նկատեցինք Ռումինիայում ծնված ու մեծացած և միայն վերջին տարիներին Ռումինիա տեղափոխված հայերի միջև, մեղմ ասած մտահոգիչ է: Սակայն մյուս կողմից՝ այդ ցավոտ դրվագը, ըստ իս, միայն Ռումինիայի հայերին բնորոշ չէ, այլև առկա է ողջ հայ ժողովրդի երկու շերտերի՝ «տեղացիների» և «եկվորների» միջև: Թեև խնդիրը մեկ այլ հետազոտության թեմա է, սակայն առավել քան ակնհայտ է, որ այն, պայմանավորված հայ ժողովրդի դժվարին ճակատագրով, ունի յուրահատուկ «բացատրություն»: Ցավալիորեն, դժվար թե ժամանակի ընթացքում հեռավորություն և խորթություն չառաջանա միևնույն ժողովրդի այն հատվածների միջև, որոնք ունեն ինքնության տարբեր ցուցիչներ այնպիսի հարևորագույն հարցերում, ինչպիսիք են լեզուն, մշակույթը, երբեմն նաև ապագայի հանդեպ տեսլականը: Կարծում ենք՝ սա բավականին խորքային ուսումնասիրության թեմա է: Ինչևէ, հարկ է նշել, որ լեզվի հարցը Ռումինիայում մնում է բավականին խնդրահարույց, և Հայաստանից ուղարկված գրքերը միայն կիրականօրյա դպրոցի շրջանակներում բավականին փոքր օժանդակություն են:

Հաշվի առնելով կրոնական քիչ տարբերությունները՝ ծուլման վտանգը ևս շարունակում է մնալ առաջնային այս երկրի հայերի համար:

Չնայած առանձնացված բավականին լուրջ խնդիրներին՝ կարծում ենք այսօր Ռումինիան այն եվրոպական երկրներից է, որտեղ հայերը ունեն լայն իրավունքներ: Այս մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 1992 թվականից ՌՀՄ ներկայացուցիչը Ազգային փոքրամասնությունների խորհրդարանական խմբի ղեկավարն է: Խումբը ընդգրկում է 18 փոքրամասնություն և չի ներառում միայն հունգարացիներին, որոնք խորհրդարանում ներկայացված են սեփական կուսակցությունով: Դատելով շարադրվածից՝ հստակորեն կարող ենք եզրակացնել, որ Ռումինիայի հայ համայնքն այդուամենայնիվ ունի բոլոր նախադրյալները պահպանելու մշակութային հսկայական ժառանգությունը: Իսկ տարբեր տարիներին կայացած խորհրդարանական ընտրություններն էլ իրենց հերթին վկայում են, որ համայնքը կարող է ազդեցիկ դերակատարում ունենալ նաև երկրի քաղաքական կյանքում:

Гегам Асатрян, Армянская община Бухареста на современном этапе. Армяне в Румынию поселились еще много веков назад. Разные группы армян переехали в Румынию после Геноцида армян и распада Первой Республики Армении, а также во время миграции 1990-х гг. На сегодняшний день армяне активно вовлечены во внутреннюю жизнь страны. Во время парламентских выборов Армянское общество в Румынии (АОР) чаще всего имеет свое представительство в парламенте, а, начиная с 1992 года, АОР является руководителем парламентской группы национальных меньшинств. Руководитель АОР - В. Восканян долгие годы занимал министерские посты.

Как и в других христианских странах, в Румынии также, армяне стоят на грани ассимиляции, в то же самое время единственная воскресная школа в Бухаресте не способна решить проблему армянского языка. Эта картина немного меняется, когда начинают общаться армяне, которые родились и выросли в Румынии с армянами, приехавшими в Румынию из Армении.

Ключевые слова: Румыния, Бухарест, армянская община, Армянское общество в Румынии, полевое исследование, диаспора, самобытность.

Gegham Asatryan, The Armenian community of Bucharest nowadays. Armenians settled down in Romania still centuries ago. Several groups of Armenians moved to Romania after the Armenian genocide and the fall of First Republic of Armenia, and a sector of Armenians has periodically moved because of the emigration begun in Armenia since 1990s. At the present time Armenians have quite great implication in the inner life of the country. During parliamentary elections the Union of Armenians of Romania basically is present in the parliament, and since 1992 a representative of UAR has also been the leader of the parliamentary group of national minorities. UAR president V. Voskanian was minister in various fields.

Like in other Christian countries Armenians are endangered to be moulded in Romania too. At the same time only Sunday school in Bucharest doesn't enable to solve the question of the Armenian language. The situation is a little softening as a result of contacts between Armenians borned and grown up in Romania and Armenians moved there from Armenia in recent years.

Key words: Romania, Bucharest, Armenian community, Union of Armenians of Romania, field research, diaspora, identity.